ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-20/07

ք. Երևան 27 օգոստոս 2020 թ.

,Հայաստանի հանրային ռադիոընկերություն ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Խումարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Տեք Տոն ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Համազասպյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Հայաստանի հանրային ռադիոընկերության մասնաշենքի վերանորոգման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների** կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ նախագծողը՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերը կազմում է օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաների և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնում է աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային ժամանակացույցը,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնում է հայերեն և անգլերեն լեզուներով թղթային և էլեկտրոնային տարբերակներով:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 1880000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենքդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական)տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում սկզբնական նախագծի տասը տոկոսը գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների արժեքի քսանհինգ տոկոսին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի հանգեցրած՝ փաստացի կատարված աշխատանքների արժեքի հիսուն տոկոսին:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

---

[21] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
<<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>>ՓԲԸ	Տեք Տոն ՍՊԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5	Ք. Երևան, Մոսկովյան 21, բն.9
ՀՎՀՀ 01541435	ՀՎՀՀ 01568773
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ>> ՓԲԸ	Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 220553334321000	h/h 1570014997530100
Գործադիր տնօրեն Գ.Խումարյան	Տնօրեն Գ. Համազասպյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
ե 2020 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի հանրային ռադիոընկերության մասնաշենքի վերանորոգման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ

ՀՀդրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Հ/Մ	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	ժամկետը
	71241200 /2	<u>Ջեռուցում</u> Ադմինիստրատիվ շենքի համար մշակել երկխողովականի ջեռուցման համակարգ վերին բաշխումով տանիքում մասնաշենքերի համապատասխան բաժանումով: Ջերմամատակարարումը նախատեսել գործող կաթսայատնից հիմք ընդունելով գոյություն ունեցող ջերմային ցանցը, որը իր հերթին ենթակա է փոխարինման համաձայն նոր խողովակաշարի ներդրման: Ջերմային բեռը հաշվարկելիս առաջնորդվել գործող ՀՀ Շինարարական Նորմերով և հավելյալ նախատեսել ըստ ստացված հզորությունների պահուստ ընդհանուր 25%-ի չափով հաշվարկելով ջերմամատակարարման խողովակները ըստ պահուստի: Որպես ջեռուցման սարքեր դիտարկել ալյումինե ջեռուցման մարտկոցներ, հետագայում իրականացման ժամանակ գոյություն ունեցող մարտկոցները օգտագործելու նպատակով: Բոլոր մարտկոցների վրա նախատեսել թերմոգլխիկով փականներ էներգաարդյունավետության բարձրացման համար: Ջերմամատակարարաման և ջեռուցման խողովակները մեկուսացնել բարձր ջերմային դիմադրություն ունեցող մեկուսիչներով: Հիմք ընդունելով թերմոգլխիկների առկայությունը նախատեսել կաթսայատան մոնիտորինգ և համապատասխան վերազինում, փոփոխական ջերմակրի հոսք ապահովելու համար: Անհրաժեշտության դեպքում նախատեսել ցանցային պոմպերի համալրում հաճախության կերպափոխիչներ և հիդրալիկ սլաք ցանցի և կաթսաների հանգույցի բաժանման համար: Շենքի տանիքում բոլոր բաժանարար ուղղահայաց կանգնակների վրա շղթային միացման հանգույցում նախատեսել հոսքի ավտոմատ	դրամ	630000	1	Ալեք Մանուկյան 5	2020թ.՝ պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ

		կարգավորիչ փականներ հիդրավլիկ հավասարակշռման և կարգաբերման համար: Ընդհանուր շենքի մակերեսը կազմում է մոտ 8300 քմ: Շինությունը ունի 4 վերգետնյա հարկ և նկուղային հարկ: Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային նախագիծ և նախահաշիվ:Ներկայացնել ժամանակացույց: Ներկայացնել բացատրագիր, հատակագծեր, սխեմաներ, մանրամասն: Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: Նախագծա–նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն ՓԲԸ-ի հետ: Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: Նախագիծը ներկայացնել 4 օրինակից, նախահաշիվը՝ 2 օրինակից հայերեն և անգլերեն լեզուներով: Նախագծա–նախահաշվային փաստաթղթերիը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: Աշխատանքի դիմաց վճարումը կատարվելու է դրական փորձաքննության եզրակացությունը տրամադրելուց հետո:					
2	71241200 /3	<u>2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերի արտաքին ճակատի կողմի սենյակների և ստուդիաների օդափոխություն և օդորակում.</u> **Զախ մասնաշենքի ստուդիաներում և արտաքին ճակատի կողմի սեյակներում նախատեսել օդափոխության և օդորակման համակցված VRF համակարգ, հիմք ընդունելով ներկայացված չափորոշիչները.** • Օդորակման ներքին բլոկերի տեղադրում միջանցքում (կանալային տիպի) • Մինիմալ աղմուկի շեմով (18dB) ստուդյաներին համապատասխան նորմատիվների • Մաքուր օդը ըստ հարկերի ապահովելով կանալային 100% մաքուր օդով աշխատող ներքին բլոկներով	դրամ	550000	1	Ալեք Մանուկյան 5	2020թ. պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ

		• Օդորակման արտաքին բլոկները տեղադրում ետնային բակում և մեկուսացում շենքի հիմքից պատերի թրթռման բացառման համար: Հատվածամասերի մակերեսը կազմում է մոտ 650 քմ: **Նկուղային հարկի ձայնագրությունների Մայր Օրինակի արխիվի օդորակում.** Տվյալ տարածքի համար նախատեսել կենտրոնացված ճշգրիտ օդորակիչներով համալրված օդորակման համակարգ: Տարածքում պետք է ապահովել հնարավորինս անփոփոխ-չտատանվող ներքին կլիմա: Առաջնորդվելով օդի ջերմաստիճանով, խոնավությամբ և օդի շարժման արագությամբ: Հնարավորության դեպքում նախատեսել օդի բաշխումը կեղծ հատակի միջով : Համապատասխան սարքը պետք է անկախ լինի ջեռուցման և օդորակման այլ ն համակարգից և համալրված լինի. • Ֆրեոնային օդասառեցուցիչով • Էլ. տաքացուցիչով • Գոլորշային խոնավացուցիչով (ցածր խոնավության պայմաններում հարաբերական խոնավության կարգավորման) Հատվածամասերի մակերեսը կազմում է մոտ 320 քմ: Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային նախագիծ և նախահաշիվ:Ներկայացնել ժամանակացույց: Ներկայացնել բացատրագիր, հատակագծեր, սխեմաներ, մանրամասն ծավալներ բոլոր հատվածամասերն առանձին: Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: Նախագծա–նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն ՓԲԸ-ի հետ: Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: Նախագիծը ներկայացնել 4 օրինակից, նախահաշիվը բոլոր հատվածամասերն առանձին 2 օրինակից հայերեն և անգլերեն լեզուներով: Նախագծա–նախահաշվային փաստաթղթերիը ներկայացնել					

		նաև էլեկտրոնային կրիչով: Աշխատանքի դիմաց վճարումը կատարվելու է դրական փորձաքննության եզրակացությունը տրամադրելուց հետո: :					
3	71241200 /4	<u>Վերանորոգում.</u> Զախ մասնաշենքի 2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերում տալ առաջարկ նոր գեղարվեստական և հատակագծային լուծումներով: Նախատեսել հատակների վերանորոգում՝ հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում լամինատ, խեցեսալ կամ կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, հնարավոր է կախովի առաստաղի իրականացում, անհրաժեշտության դեպքում դռների և պատուհանների փոխարինում: Սանհանգույցների հիմնանորոգում՝ հատակի և պատերի խեցեսալերի և կերամիկական սալերի, զուգարանակոնքերի և լվացարանների փոխարինման աշխատանքներ, կախովի առաստաղի իրականացում: Ջրամատակարարման և ջրահեռացման խողովակների փոխարինում նորով; /անհրաժեշտության դեպքում/: Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր, ստուդիաների աշխատանքը իրականացնող հատուկ էլ. համակարգի ապահովում: Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: Այլ ցուցումները և նյութերը ըստ պատվիրատու պահանջների: Հատվածամասերի մակերեսը կազմում է մոտ 1100 քմ: **Հիմնական մասնաշենքի 2-րդ հարկի** միջանցքի հատվածամասում և մի քանի սենյակներում տալ առաջարկ նոր գեղարվեստական և հատակագծային լուծումներով: Նախատեսել հատակների վերանորոգում՝ հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում լամինատ, խեցեսալ կամ կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, հնարավոր է կախովի առաստաղի իրականացում, անհրաժեշտության դեպքում դռների և պատուհանների փոխարինում: Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով	դրամ	700000	1	Ալեք Մանուկյան 5	2020թ.՝ պայմանագիրը օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից 60-րդ օրացուցային օրը ներառյալ

		Էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր: Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: Այլ ցուցումները և նյութերը ըստ պատվիրատու պահանջների: Հատվածամասերի մակերեսը կազմում է մոտ 300 քմ: **Հողատարածքում գտնվող ավտոտնակների մասնաշենքի վերանորոգո** Նախատեսել հատակների վերանորոգում՝ խեցեսալերով կամ կերամիկական սալերով, հնարավոր է այլ նոութերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, հնարավոր է կախովի առաստաղի իրականացում, անհրաժեշտության դեպքում դարպասնե փոխարինում կամ վերանորոգում: Գոյություն ունեցող լանջավոր տանիքի քանդում ծածկի շերտերի հետ միասին: Նոր տանիքի և շերտերի իրականացում: Շինությանը կից պատի քանդում, նորի կառուցում: /մոտ 7 զծ.մ//: Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր: Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: Այլ ցուցումները և նյութերը ըստ պատվիրատու պահանջների: Շինության ներքին մակերեսը կազմում է 90 ք.մ, արտաքին մակերեսը կազմում է 103 քմ: Շինությունը միահարկ է: **Զախ մասնաշենքի նկուղային հարկի ձայնագրությունների Մայր Օրինակի արխիվում** տալ առաջարկ նոր գեղարվեստական և հատակագծային լուծումներով: Նախատեսել հատակների վերանորոգում՝ հին մանրահատակի նորոգում և նորի իրականացում, անհրաժեշտության դեպքում լամինատ, խեցեսալ կամ կերամիկական սալերով, պատերի և առաստաղի հարդարման աշխատանքներ, հնարավոր է կախովի առաստաղի իրականացում, անհրաժեշտության դեպքում դռների և պատուհանների փոխարինում, նոր բացվածքների իրականացում: Էլեկտրական համակարգի վերանորոգում, նախատեսելով էներգախնայող ԼԵԴ տիպի լամպեր: Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ: Այլ ցուցումները և նյութերը ըստ պատվիրատու պահանջների: Հատվածամասերի մակերեսը կազմում է մոտ 320 քմ: Ներկայացնել մանրամասնորեն կատարված					

		ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային նախագիծ և նախահաշիվ:Ներկայացնել ժամանակացույց: Ներկայացնել բացատրագիր, հատակագծեր, սխեմաներ, մանրամասն ծավալներ բոլոր հատվածամասերն առանձին: Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն: Նախագծա–նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն ՓԲԸ-ի հետ: Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները: Նախագիծը ներկայացնել 4 օրինակի, նախահաշիվը բոլոր հատվածամասերն առանձին 2 օրինակից հայերեն և անգլերեն լեզուներով: Նախագծա–նախահաշվային փաստաթղթերիը ներկայացնել նաև էլեկտրոնային կրիչով: Աշխատանքի դիմաց վճարումը կատարվելու է դրական փորձաքննության եզրակացությունը տրամադրելուց հետո:					

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա պունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
<<Հայաստանի Հանրային
Ռադիոընկերություն>>ՓԲԸ
Ք.Երևան Ալեք Մանուկյան-5
ՀՎՀՀ 01541435
<<Ակբա-Կրեդիտ ագրիկոլ>> ՓԲԸ
հ/հ 220553334321000
Գործադիր տնօրեն Գ.Խոնդարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

Տեք Տոն ՍՊԸ
Ք. Երևան, Մոսկովյան 21, բն.9
ՀՎՀՀ 01568773
Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570014997530100
Տնօրեն Գ. Համազասպյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
2020 թ. կնքված
< >
ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-20/07 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	71241200/2	Նախագծանածահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ (ադմինիստրատիվ շենքի համար մշակել երկխողովականի ջեռուցման համակարգ վերին բաշխումով տանիքում մասնաշենքերի համապատասխան բաժանումով)	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	630000	630000	630000	630000
2	71241200/3	Նախագծանածահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ (2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերի արտաքին ճակատի կողմի սենյակների և ստուդիաների օդափոխություն և օդորակում)	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	550000	550000	550000	550000
3	71241200/4	Նախագծանածահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ (ձախ մասնաշենքի 2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերում տալ առաջարկ նոր գեղարվեստական և հատակագծային լուծումներով)	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	700000	700000	700000	700000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

<<Հայաստանի Հանրային Ռադիոընկերություն>>ՓԲԸ
ք.Երևան, Նալբանդյան 5
ՀՎՀՀ 01541435
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ>> ՓԲԸ
h/h 22055334321000
Գործադիր տնօրեն Գ.Խումարյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

ԿԱՏԱՐՈՂ
Տեք Տոն ՍՊԸ
Ք. Երևան, Մոսկովյան 21, բն.9
ՀՎՀՀ 01568773
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 157001497530100
Տնօրեն Գ. Համազասպյան

---------- Կ.Տ

Հավելված 3
2020 թ. կնքված
< >
ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-20/07 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

, ե , ե 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,____ե ,_____ե 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ , ե , ե 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
2020 թ. կնքված
< >
ՀՀՌ-ԳՀԱՇՁԲ-20/07 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն